


3301
3302
3303
3304
3305

Unsupple

U.S. Govt. 1900

96.

891.71
Q-58



1664
Сергей Семёнович
Фриман

134

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

НН

2003
2011

891.71

ԱՌԵՍ ՆՈՐԱԳՈՅՆ ԳՐՈՂՆԵՐ

ՕՄԻՊ ԴԻՄՈՎ

ՎԵՆԱԼՈՒՅԻ

Թարգմ. Յակովիք Գևորգեանի

ԹԻՖԼԻՍ

Արագատիս «Եւ պէ երան տօ»

1911

946



1734
41

ՎԵՍՏԱԼՈՒՅՔ

— „Սօվու, Վեստալու,
Տեբի մոխ յալկո“.

A. Պյատիկին

Տասնեւից տարեկան էի, երբ ես նրան
տեսայ: Մինչ այդ ես նորան չէի նկա-
տում: Շտապ և անհոգ կերպով հանելով
իմ զիմնազիական զլիարկս, ես անցնում
էի նրա առաջով, քոլորովին չը խորա-
սուզւելով մտքերի մէջ: Կարծեմ, տիկին
Օկոլինան, այն տիկնոջ փոքր քոյրն՝ է,
որը լինում է մեզ մօտ... Հազիւ թէ նա
զիտէր, ով էր այն զիմնազիստը, որը բա-
րեց նորան: Սակայն ես էլ անտարբեր էի:
Բայց մի անգամ — յիշում եմ, ճաշից
յետոյ, շոգին, յուղիս ամսում ես նորան

տեսայ: Տեսայ բարձր իրանաւէտ հասակ,
խոշոր, տարփալից լայնացած ռնգեր,
թախծալի—լուրջ աչքեր և ոսկէգոյն մա-
զեր: Չը գիտեմ, ինչու նա ինձ այրի
թւաց: Եւ յետոյ, մեր սակաւ հանդիպում-
ներին, և այժմ, երբ նորան յիշում եմ,
միշտ միենոյն տպաւրութիւնս է աչքիս
առաջը գալիս: Գուցէ դորա պատճառն
էր մութ գոյնի շորը, անգորը — վեհ
քայլւածքը կամ մեծ խիստ—թախծալի
աչքերը? բայց գուցէ դա նորանից էր, որ
ես ոչ մի անգամ նորա կողքին չը տե-
սայ ոչ մի տղամարդ, նոյն իսկ ամուս-
նուն, թէն նա ամուսնացած էր:

Արդէն վեցերորդ տարին էր՝ — նա ա-
մուսնացած էր մի հարուստ սեղանաւորի
վերայ, մեր փոքրիկ քաղաքում աչքի ընկ-
նող դիրք էր գրաւում, և նորա մասին
շուշուկով պատմում էին մի լեզենդա:
Մենք, երեխաներս, ի հարկէ, ճանաչում
էինք նորան: Ասում էին — թէն ինչպէս
կարելի է այդ իմանալ? — որ Օկոլինը, չը

նայելով իր երիտասարդութեան, մի նւազ,
անոյժ տղամարդ է, և նորա կինը մինչև
այժմ կոյս է: Այժմ փոշոտ յուլիսին, տօ-
թին, ես հասկացայ նորա գեղեցկութիւ-
նը՝ ոսկէգոյն մազերը, կրքոտ-փքւած որն-
գերը, անդորր-վին քայլւածքը: Ես հանե-
ցի գլխարկս թեքելով գլուխս, «ինչպէս
թագունու առաջ», և երկար ժամանակ
գնում էի, վախենալով յետ նայել... Շատ
կարելի է, այն մայթից, կամ այն պա-
տուհնից մէկը գիտում է և յետոյ ինձ
ծաղրի աստրկայ կը դարձնի? Ես յիշեցի
լեզենդան և մտածեցի՝ «Ես գիտեմ քո
գաղտնիքը, թագունի, և դու գուշակում
ես, որ ես նորան գիտեմ, բայց հանգիստ
եղիր՝ ես քեզ պակաս չեմ յարգում և խո-
նարհում առաջդ»... Յանկարծակի ողող-
ւած մաշող երջանկութեամբ, ես յուզւած
գնում էի և տանջալից կերպով ցանկա-
նում էի յետ նայել: Եթէ այսպէս շարու-
նակ միշտ ուղիղ գնամ, անցնելով գերեզ-
մանոցի, կայարանի, զօրանոցների և ան-

տառի առաջով, այն ժամանակ, շատ կարելի է, ևս նորից կը պատահեմ նորան, կը մօտենամ, կասեմ... Զօրանոցների և անտառի այն կողմը կայ մի ուրիշ կեանք, — առանց տների և փողոցների, թեթև, ինչպէս ամպը, և ես զգում եմ նորան:

Վազուց արդէն անցաւ իմ երկնագոյն երիտասարդութիւնը, և ամեն ինչ, ինչ կարող էր կեանք տալ, ևս կրեցի, բայց այժմ, երբ որ յիշում եմ Օկոլինային, նորա վեհ—անգորը քայլւածքը, անժպտուն աչքերը և փքւած ոնքերը, — ես առաջւայ նման կարծում եմ, որ կայարանի և անտառի այն կողմը, իսկապէս, կայ մի առանձին կեանք, առանց փողոցների և փոշու, թեթև, ինչպէս ամպը, — և ես ձեռքից բաց թողի նորան...

Ես աշխատում էի յաճախակի պատահել նորան: Միշտ անաղարտ անգլիական շուրով, դէս ու դէն չնայող մէնակ գոռոզութեամք իւր գաղտնիքը տանող—նա ինձ երեւում էր հրաշալի: Աառը—կախարդա-

կան: Որքան տարօրինակ էր, արտասովոր էր, անսպասելի և «կեղտոտ» էր նորա գաղտնիքը, և որքան խիստ կպաւ իմ, տասնուվեց տարեկան երազողի ջղերին!... Իմ բազմաթիւ կլանած գրքերի մէջ նմանօրինակ ոչինչ չէի պատահել: Նկարագրած չէր ոչ մի կին, որը նման լինէր նորան: Իմ խորած, ամօթխած սէրս զէպի նա, բարձրացնում էր ինձ իմ աչքերում, որովհետև երբ երևակայում էի, որ ես ներեցի նորան և դորանով աւելի մօտ եղայ նորան... աւելի մօտ, քան ամուսինը:

Բայց նա չէր նկատում ոչ իմ «մօտիկութիւնը», ոչ նոյն խկէ իմ վեհանձնութիւնը: Նկատելով նորան հեռուից, ես վախենում էի ակնթարթել, մի վայրկեանում քամին աչքերիս արցունք էր բերում, ես հազում էի ներսս և, բսովս բանելով թեքւող կազիրովկս, խօնարհ իշեցնում էի մաշւած գլխարկս: Զը դարձնելով գլուխը, նայելով իրեն առաջը այնպէս, կարծես թէ սպասելով պատահելու

մի հսկայի, նա հազիւ նկատելի շարժումով պատասխանում էր իմ յուղած ողջոյնին։ Մաշող, ամօթխած, ջերմ երջանկութեան զգացմունքը այլում էր իմ ներքեի արտևանունքները և սիրաւ։ Տանջելով ինձ, ես մտածում էի՞ նա չը գիտէ, ով եմ ես, և աւելի պակաս է նկատում, քան կարելի է նկատել առջեկից թռչող ճանձին։ Եւ եթէ նոյն իսկ գնամ միշտ ուղիղ, կայարանի և անտառի այն կողմր, ես չեմ պատահի նորան, և կը լինեմ միայնակ, ինչպէս միշտ... «Եւ այնուամենայնիւ ես քո հպատակն եմ, թագուհի, և քո գաղտնիքը ինձ թանգ է»։

Ես մեծանում էի և աւելի խորն էի հասկանում նորա գաղտնիքը։ Որքան թափանցիկ, մանր և «զւարձալի» էր նա երևում ուրիշներին, այնքան աւելի բարձր, աւելի շարժող և թախծալի—ողերուած էր գառնում իմ վերաբերմունքը դէպի Օկոլինան։ Շատ կարելի է միայն տամնութ տարեկան պատահները գիտեն, ինչումն

է ճշմարտութիւնը...

Նեղ փողոցներով, հարիւր ծանօթ մարդկանցով, անվերջ բամբասանքներով և շուրջ բոլոր լրտեսութեամբ փոքրիկ քաղաքը ամուր բռնած ունէր նորան իր ճանկերի մէջ։ Ես այդ հասկանում էիր ես հասկանում էի, որ ապրէր նա բոլորովին խուլ տեղում, կամ մեծ քաղաքում—նա կը պատահէր մէկին, և նա կունենար սիրեկան, բայց այս տեղ, ուր ամեն մի փոշոտւած պատուհանից, ամեն մի կեղտոտ կրպակից հետեւում էին նորան աննկատելի, կամովին, և, հետեւապէս, —անխնայ խուզարկութեամբ, նա թախծու, մուգ-կապտապոյն աշքերով, իրանաւէտ մարմնով, չափւած քայլւածքով, իր մըտքերով և ցնորքներով—ամբողջովին զըտնուում էր փոքրիկ, ծիծաղելի փիզիօգիւական պատահմունքի իշխանութեան տակ։ Որպէսզի նորան փախչելու հնարաւորութիւն չտան, որ նա ոչ մի տեղ չը կարողանայ թագնւել տասնի չափ ազգական-

ներ, հարիւրի չափ բարեկամներ և հազարի չափ օտար մարդիկ հսկում էին նորան օր ու գիշեր, ձմեռ ու ամառ։ Կը-սուրները և պատերը հսկում էին նորան, վտիս փողոցային ծառերը, կենդանիները, կայարանը, և անտառը, և տեղական ընթերցարանից առնւած իւղուած թերթիկներով գրքերը և նամանաւանդ կրպակների երկար շարքը, որոնց գոները և պատուանը միախառնել են բոլորովին այնպէս, ինչպէս թոշունների մօտ քիթը և ըերանը միախառնում լցում է մի կը-տուցի մէջ։ Իրանց սև բացւածքով—ճանկող կտուցի նման—հսկում էին դոքանորան, երբ որ, չը գարձնելով իր հպարտ, կուսական զլուխը, նա, շատ կարելի է, կրքից փրւած ոնդերով նուրբ—համաշափքայլածքով անցնում էր քաղաքի միջով։ Նա պէտք է լինի առաքինի! Նա պէտք է մնայ առաքինի!

Ես մտածում էի՛ ինչպէս է նա ապրում? ինչ է նա անում?—և ոչինչ չէի կարող

երևակայել։ Որոշւած ժամերին նորան կարելի էր պատահել։ Նա գնում էր անաղարտ, նուրբ անգղիական շոր հագած, փոքր ինչ զլուխը բարձրացրած, և նայելով ուղիղ իրեն առաջը, կարծես թէ սպասում էր պատահել մի հսկայի։ Անշարժաջերով նա պատասխանում էր ողջոյններին աննկատելի շարժումով։ Կարծես թէ ցոյց էր տալիս ինքն իրան, սակայն նոյն ժամանակ թւում էր, որ նա բոլորովին չի նկատում իրեն շրջապատող առարկաները։ Նորա զբոսանքը վերջանում էր ուղիղ քաղաքի ծայրին, այնտեղ, որտեղ մայթի ասֆալտին արդէն փոխարինում էին տախտակները։ Այստեղ նա շուռ էր գալիս և յետ էր դառնում, կարծես թէ փոքրիկ, սև քաղաքը իր բացւած «կտուցներով» բաց չէր թողնում նորան իր շրջագծից գուրա։

Ես ոչ որի հետ չէի իւսում նորա մասին, գրում էի նորան երկար նամակներ, յաճախակի արտասուք էի թափում նոցա

վերայ, և, վերջացնելով, այրում էի նոցայտակի վերայ, վառարանի մօտ արդյօթ տախտակի վերայ: Ես քնած էի երազում եմ, որ ես քնած չեմ, նստած եմ, քիչ բարձրացած մահճիս վերայ, և լուսինը լուսաւորում է ինձ, սպիտակիս:

**

Մեռաւ բժիշկ Լ., նորա հօրեղբայրը, որի մահւանը ես ուրախացայ, որ կը տեսնեմ նորան, բայց ամաշում էի իմ ուրախութեան համար: Բժշկին լաւ էին ճանաչում մեր քաղաքում: Ես գնում էի դագաղի յետեկից և ոչ ոքին դա զարմանք չէր պատճառում: Գերեզմանոցում ես խոնած ամբոխի միջով անցայ գերեզմանին և տեսայ Օկոլինային: Այտերի վրայ կարմիր, անհաւասար բծեր կային, աչքերը վախեցած, զարմացած և շւարած արտայայտութիւն ունէին: Նա կոնստակով ունէր բռնած ինչ որ պառաւ կին, երեի բարեկամուհուն, նա, որը առաջ թեքւելով շարժում էր գլուխը և, բերանը օդ

առնելով կանոնաւոր ընդմիջումներով երկարաժակ հառաջանքներ էր արձակում: Երեսում էր, որ պառաւը առաջին անգամը չէր գերեզմանատանը, և արտասուքը, և մահը նորա համար սովորական բաներ էին... Բայց Օկոլինան երեսում էր ապշած, շւարած... Մուգ-կապտագոյն գօֆրի արած ներքնազգեստին ցածրից կպաւ աշնանային թաց հողը: Երբ որ սկսեց երգել երգեցիկ խումբը, նա արագ ձեռքերը մօտեցրեց աչքերին և անզուսպ կերպով սկսեց հեկեկալ: Ես նայում էի նորա վերայ, իմ աչքերիցս նոյնպէս ցայտեցին արտասունքներ, սիրոս ծանրացաւ, ինչպէս խոհանոցի ժամացոյցի ծանրոցը: Ինձ թւում էր, որ նա լաց է լինում իր համար, իր ծիծաղելի ստրկութեան համար, նորա համար, որ սկ բաց կտուցները անդադրում հետեւում են նորան, իսկ «նա» չէ գալիս...

Երգեցիկ խումբը երգում էր աշնանային բացօղեայ, տխուր քամին կըպ-

չում էր մաղերին, սահելով բաց գլխների վրայով, Երբ որ դադաղը տանում էին քաղաքի միջով, սալահատակած փողոցների վրայով և խանութների ցուցագրերի միջով, թռում էր, որ բժիշկ Լ.-ի և նորա ընտանիքի վերայ կատարւած է մի մեծ անարդարութիւն, և գանգատւելու տեղ չկայ: Իսկ այստեղ թախծալի երգեցողութեան և փափուկ խոնաւ գետնի մէջ այդ միտքը չկար: Ուզում էի հաւատալ, որ մէկը քնացը է բժիշկ Լ.-ին—այդ ճաղատ բժշկին, որ տանջւում էր շնչարգելութեամբ...

Շուրջը բոլորը երևում էին ծանօթ, բարի և որբացած: Վերջը, երբ ինձ վիճակւում էր լինել թաղումներին, ևս միշտ յիշում էի բարձր, անաղարտ անգղիական շորով կնոջը, որը յուսահատութեան մէջ ծածկել էր աչքերը և տգեղ կերպով հեկեկում էր: Նորա ներքնազգեստի փեշերին կպել էր գեղին, սառը, խոնաւ հողը:

Միայն տասնեռութը տարեկան պատա-

նիները զիտեն, ինչումն է ճշմարտութիւնը՝ ևս արգէն ոտ էի կոխել քսաներեքերորդ տարին, և ես կորցրի նորան...

Ես ուսանող էի և նորից ընկայ հայրենի քաղաքաւ: Մեր երիտասարդութիւնը սովորական ուսանողական երեկոյթ կազմելով, պատւաւոր կարգադրիչների շարքում հրաւիրեց և Օկոլինային...

Ամբողջ զիշերը անցաւ պարահանդէսի երաժշտութեան խիտ քուլաների մէջ: Ես սահում էի դահնիձի միջով, զգում էի իմ ջահելութիւնը, թեթև ամօթիսածութեամբ հպարտանում էի նորանով: Ես հագած ունէի նոր համազգեստ կըծքիս կարգադրիչի ժապաւէնով, օձիկս խեղտում էր ինձ, և ամեն տեղ ես տեսնում էի օրիօրդների ջահել աչքերը: Նոքա բոլորը հմայիչ և շարժելու չափ գեղեցիկ էին երևում:

—Միթէ դուք էք, Ժենեա?—ասում էի ես մի բարձր և դուրեկան օրիօրդին—ես յիշում եմ ձեզ, երբ դուք զիմնազիստկա էիք, ահա այս չափ... Ժենեա...

— Աւր է խցահանը? Դու խցահանը չես
տեսել? — վախեցած թռաւ ինձ մօտ կրուսաը
և երկու ձեռքերով բանեց իմ ուսերը:

Իմ երեսը նոյնպէս վախեցած արտա-
յայտութիւն ընդունեց, ես նոյնպէս կպայ-
նորան երկու ձեռքերով:


— Խցահանը? իսկ Գլազունովը չը գի-
տէ? ներեցէք, ժենեա, — ասում էի ես
բարձր գուրեկան աղջկան և, սահելով
պարկետի վրայով, նետում էի բուֆետ-
ները, կորած խցահանը փնտուելով:

— Գլազունով... պաղպաղակում... — Ա-
սում էի ես հետեւից կրուսի շնչառառ
ձայնը՝ օրիսրդներին սաոցին է նստացնում:

Բայց ճանապարհին երկու ձեռքով բը-
նում էր ինձ վախեցած դէմքով վազող
կողենը:

— Ընկեր, գուք ունէք կադրիլում վի-
զաւի՞ Հրաւիրեցէք Կոնդորեային:

— Իսկ գուք չէք տեսել խցահանը? Որ
Կոնդորեային? — պատասխանեցի ես նոյն
վախեցած դէմքով:



— Նօտարի աղջիկը: Անհրաժեշտ է հրա-
լիքել: Խցահանը յետոյ: Սպիտակ շորով:
Անհրաժեշտ է:

— Ես ինքս կը գտնեմ խցահանը — խրա-
խուսում էր կրուսաը: Ի սէր Աստուծոյ
հրաւիրիր Կոնդորեային: Ի սէր Աստուծոյ:

Վերևից կտորի տակից, ուր տեղաւոր-
ւել էր զինուրական երաժշտութիւնը
ներքև էին ընկնում երաժշտութեան ծանր
քուլաները, սողսում էին պարկետի վրա-
յով, և մենք նոցա հունցում էինք, տրո-
րում, կրխկրառում էինք ոտներով: Նորից
ես սահում էի դահլիճով, իմ հետեւից վրայ
էր համնում Կողինը և, շնչառառ, ինչ-
պէս մի բոպէ առաջ, կրուսաը ասում է՝

— Սպիտակ շորով... Ես ձեզ կը ծանօ-
թացնեմ... Երրորդ պարն է նստած է...
Ի սէր Աստուծոյ...

... Մեծ պատուհանների այն կողմը
լուսաւորւեց: Դա պատահեցաւ մի ինչ
որ անսպասելի կերպով: Օձիկս սեղմում
էր ինձ, ինչպէս մայսած է երաժշտութեան



նստւածք ծաւալող յոդնածութիւնը թրմ-
րացնում էր ոտերս: Շուրջը բոլորովին
քիչ ժողովուրդ կար: Անյայտացան ժե-
նեան և Կոնդորեան, Կոգենը երկարամաղ
ամօթխած կրուսսի հեա զրուցելով ման
էին գալիս ահագին դահլիճի շեղակի ուղ-
ղութեամբ: Ինչպէս թափւած ծաղկատե-
րեները ընկած էր զանազանագոյն կօն-
ֆէտին: Տուն էր գնում ինչ որ կին, ես
նայում էի վերեից նորա մերկ ուռերին
և նորա վերայ, ինչպէս պարահանդէսի
շորի երկար շէյֆը թեթև չանգուածքով
իր հնեսեից քարշում էր կտրւած սերպան-
տինի ժապաւէնը:

Ես մօտեցայ սեղաններին, որոնք կա-
ռավարում էին մեր կարգադրուհիները:
Անքննութիւնից, երաժշտութիւնից և իր-
մած գինուց ես արդէն երազում էի: Ինձ
երեսում էին ինչ որ սպիտակ աստիճան-
ներ, ծածկւած կարմիր խալիչայով և տա-
նող դէպի վեր, դէպի սարը... Յանկարծ
ես տեսայ իմ առաջը Օկոլինիային: Նոյն

խիստ-թախծալի աչքերը և փրւած նեղ-
րային ոնզերը: Ուկէգոյն մազերը երեկ-
ւանից ոանրւած էին վարսաւերի ձեռքով,
և թւում էր, որ նոքա աւելի շատացել
էին:

—Ես ձեզ վերայ սիրահարւած եմ եղել—
ասացի ես, պուկ գալով սպիտակ աստի-
ճաններից:—Լուրջ: Դուք այդ չը զիտէք?
Ես ոեռ երեխայ էի, —աղօթում էի ձեզ
համար:

Նա ինչ որ բան հաւաքում էր սեղանի
վերայ և նայեց ինձ վերայ, ժպտալով
երեկոյթից մնացած ժպիտով: Ինչպէս
երեսում է ես մի քայլ արի, որովհետև ես
տեսայ նորան այն խիստ մօտիկ հեռա-
ւորութեան վերայ, երբ ծանօթ դէմքը
արդէն ուրիշ տեսակ է երեսում, —փոխւած:
Ինչպէս երեսում է ես աննկատելի ակն-
թարթեցի, որովհետև մի վայրկեան նորից
երեացին դէպի կանաչող լեառը տանող
աստիճանները:

—Ես ձեզ զրում էի նամակներ—ասացի

ես համարձակ իմ ջահելութեամբ և անամօթ—սանձարձակ ինձ վերայ ազդող երաժշտութիւնից՝—յիշում եմ ձեր մուզկապտագոյն ծալւածքներով շորը... ևս ձեր շորը սիրում էի:

Աստիճանները անյայտացրան, աւելի ու աւելի լուսանում էր: Ես զգացի, որ բըռնած ունեմ ձեռքերումս նորա, սպիտակ ձեռնոցը քիվ հագած, փոքրիկ ձեռքը: Սեղանի վերայ անթափանցիկ լուսով վառում էին երկու ճրագներ—այժմ աւելորդ: —Զեզ փաղաքշանք է հարկաւոր,—ասացի ես կամացուկ, և իմ սիրտը խոստեց՝ դուք չը գիտէք...

Նա չէր խրում իր ձեռքը, ես միտս բերեցի ձեռնոցների վրայի երկու կոճակները և կոր կտրւածքը, ուր երեսում էր վարդագոյն մարմինը:

—Դուք չը գիտէք,—հեղնեցի ես և կռանալով ուզում էի համբուրել կտրւածքը:

—Ո՞չ,—լսեցի ես:

Նա իջեցրեց կոպերը, յետոյ հանգիստ

բարձրացրեց աչքերը և նրանց մէջ արտացոլացին մարտող ճրագների անպէտք կրակը:

—Ո՞չ!—կրկնեց նա շատ հանգիստ և թագնւած ոյժով, որը ես իսկոյն հասկացայ:

Ինձ իսկոյն սարսուռ պատեց, ամեն ինչ խունացաւ, ձախ աչքիս վերայ սկսեց ծակել, ինչպէս ամօթահար եղած, կանգնած էի ես սեղանի մօտ, չիմանալով ինչ անել:

—Ճրագները կարելի է հանգցնել?—հարցրի ես:

—Այն,—հանգարտ պատասխանեց նա:

«Շուտով հեռանալ այստեղից, և մոռանալ, ամեն ինչ մոռանալ»,—անցաւ ուղեղիս:

Ես հանգցրի ճրագները:

* * *

Վեց տարի ես ապրում էի օտարութեան մէջ... Զմեռը ես եկայ կնոջս և մեր երեք ամսեկան մանչուռ հետ միասին: Մենք

գնում էինք ճանապարհորդութեան, իսկ
երեխայիս թողնում էինք մեծ մօր մօտ:

Այն օրիբուժները, որոնց հետ ես երե-
կոյթին պարել էի, վաղուց արդէն ամու-
սնացած էին և ունէին երեխաներ: Բար-
ձրահասակ ժենեայի մեծ աղջիկը մեռել
էր, Կոնդորեան դաւաճանում էր ամու-
սնուն և յզի էր: Քաղաքը քիչ էր փոխւել,
մի քանի տեղ անյայտացել էին փայտա-
շէն տները, և նորանց տեղը երևացել էին
քարէ տներ: Ես պատահում էի իմ առա-
ջւայ հասակակիցներիս, նոքա մորուք
ունէին: Ես տեսայ, թէ ինչպէս ապշեցու-
ցիչ կերպով նման էին իրանց հայրերին,
ինչպիսին էին նոքա իմ մանկութեանս
օրը: Կինս հենւում էր իմ ձեռքին, ես
այժմ պարզ տեսնում էի, և հաւատում
էի, որ բոլորը, բոլորը քաղաքում պէտք
է մեռնեն:

— Բարձրացրու օձիքդ, — ասեց ինձ կինս՝
— ցուրտ է:

Այդ բոպէին ես տեսայ Օկոլինային:

Նա գնում էր իր չափւած, վեճ քայլւած-
քով, չնայելով շուրջը և թեթև կերպով
գլուխը բարձրացրած, կարծես թէ փողո-
ցի անկիւնի միւս կողմը սպասում էր
պատահելու մի հսկայի: Ոսկէգոյն, կանո-
նաւոր սանրւած մազերը ալիքանման
դուրս էին զարնւում համեստ—նուրբ մա-
զէ գլխարկի տակից: Եւ նոյնպէս, ինչ-
պէս առաջ հանգիստ կուսական երեսին
փքւում էին կրքոտ սնգերը: Բայց նա
ինձ ուրիշ տեսակ երևաց, մեծացած, ան-
հասանելի գոռոզ:

Ես անզգայաբար քաշեցի ձեռքս կնո-
ջիցս, կարծես թէ նա ինձ բռնեց ինչ որ
կեղտոտ և շատ ամօթալի բանի մէջ: Ես
մոռացայ գլուխ տալ նորան և յիշեցի ե-
րեկոյթը, առաւօտը և նորա խիստ, վա-
նական «ոչ»-ը: Ես յետ նայեցի՝ չափովին
ծածանւում էր սև շորը մազէ վերնազգես-
տի տակից: Սև բացւած «կտուցներով»
ըստ սովորականին հսկում էր վեստալու-
հուն մեր փոքրիկ քաղաքը:

Մինչև երեկոյ ես մտածում էի նորամասին վշտալի տիսրութեամբ—ինչպէս յիշում ես հեռաւոր երաժշտութիւնը։ Ես մտածում էի, որ վաղուցւայ մոռացւած կրակը պահում և պահպանում է այդ աղջիկը այստեղ, ցեխոտ փողոցների և արքանդաւորւող կանանց ամբոխի մէջ։

Մոայլ, ոև քաղաքը շղթայել էր նորան և դատապարտել։ Կեղտոտ, ազահ, բամբասող, յղի գաւառի մէջ նորա պատահական հեղաթիւրած կեանքը նման է յանկարծ յարութիւն առած պլազմող ճրագի, մտքի։ Նա այդ չը գիտէ…

Իմ երեխայիս ժպիտը ինձ չէր ուրախացնում։ Կայ մի ուրիշ կեանք, հպարտ և վեհ—ես բաց թողի նորան…



3301

3302

3303

3304

3305

2013

